

ձեռագիր Ճառքնորի մը, որ 1204ին գրուած է, եւ որուն ստացիչն էր Աստուածատուր «ռայիս (պետ ազգայնոց) Բայբերդոյ¹»։ Սպերի մասին ալ, որուն պատմականը չ'ինք ուզեր ընել, կը բաւէ յիշել նոյն իսկ Վրական Տարեգրոց երկարօրէն պատմածը Վախթանգայ Գ. օրերուն համար (1301—1307) թէ վաշկատուն թուրքերու մեծ բազմութիւն մը՝ առաջնորդութեամբ «Ազատ-Մոսէ», անձին, իբր 60.000 հոգի, ամառները կ'ողողէին Պարսիսար լեռները, կ'ասպատակէին ի Տայս եւ աւելի հեռուները, իսկ իրենց ձմերոցն էր «Պոնտոսի մօտերը», յատկապէս «Սպեր եւ Բաբերդ²», եւն։ Սպեր ու Բաբերդ ժն. դարու մէջ Պարսից եւ Օսմանցւոց յաճախակի պատերազմաց ասպարէզ եղած են եւ հրոյ, սրոյ ու զերութեան մատնուած։ Օսմանցիք զԲաբերդ առին 1473ին ։

Սպեր ու Բաբերդ ուրեմն երկար ժամանակ ունէին մահմետական բռնութիւն կրելու, եւ կրած են ամէն տեսակ ինչպէս ամէն ուրիշ կողման հայերը։ Անթիւ փաստերու մէջ յիշենք հատ մը, զոր տեղւոյն

¹ Հմմտ. Հ. Դէ-Նոբ Վ. Անէւ, «Հայապատում», Վենետիկ 1901, էջ 448—451։

² Հմմտ. Brosset, Histoire de la Géorgie etc., Pétersbourg 1858, Vol. I, 1, p. 626—630.